

ԳԼՈՒԽ ԻԴ ԱՆՉԳԱՄ ԿԻՆ

Գուրգենի անունը տարածուեցաւ բոլոր շրջակայքը, եւ թշնամի ու բարեկամ չէին կրնար առանց ակնածութեան նայիլ այդ մարդուն վրայ. եւ որ մեծ դժբախտութիւն էր, նա աւելի նեղութիւն կը կրէր «ընտանի հարազատ ազգականներէ, որ ուխտագանց լինիլ, ստերդում լինիլ, խոստմանց դրժել չէին ամաչէր», վասնզի գիտէին թէ այդ դիւցազն եւ վսեմ բնութիւնը ներելով միայն վրեժ կը իսկոյր: Թեպէտ Ռշտունեաց Ոստանը հանգչիլ սիրելի էր իրեն սրտին անցեալ յիշատակներով, բայց երբեք չի թուլացաւ, զօրքը կը շատցնէր, կը մարգէր՝ միշտ ուշադիր Բուղայի ամէն շարժմանց, եւ Վասպուրականի ժողովուրդը զինք փրկիչ եւ հայր կ'անուանէր: Իսկ բռնաւորն արդէն յոգնած՝ երբ իմացաւ թէ մարդ մը կայ իր առաջը, որ ամբողջ բանակ մը կարժէր, աւելի լաւհամարեց քաղցրութեամբ եւ խաղաղութեամբ գործը լմնցնել, իշխանական սուր եւ գօտի եւ պատերազմական խրոխտալիր ձի եւ Վասպուրականի գլխապետութեան հրովարտակ ուղարկէր, ի մեծ ուրախութիւն հայ ժողովրդոց: Եւ ինքն Բուղայ ժողուելով բոլոր հայոց մեծ նախարարքը եւ նոյն ինքն Սմբատ Սպարապետ կառնուր կը տանէր ի Բաղդատ՝ նորա որդուոյն Աշոտոյ յանձնելով Յայաստան. իսկ ամիրապետն անխտիր զամենքն ի մահմեդականութիւն բռնադատեց, միայն Սմբատ եւ տիկին Յռիփսիմէ ամէն սպառնալիք արհամարհելով խոստովանաբար բանտի մէջ իրենց կեանքը կնքեցին:

Իսկ Աշոտ Բագրատունի խոհեմութեամբ եւ իմաստութեամբ երկիրը սկսաւ կառավարել եւ շինել. մինչեւ ամէն մտածող մարդ կրնար զարմանալ եւ մինչեւ այսօր կարող է զարմանալ, երբ լաւ խորհրդածէ թէ այդ ոտնակոխ Յայաստանի ժողովրդոց մէջ ի՞նչ աստիճանի կենսական զօրութիւն կար, որ այնչափ թշուառութեանց, այնչափ տառապանաց փոթորիկներէ վերջ երկիրը կը խլրտէր եւ կը սկսէր շէննալ: